**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ(ԷԱՃ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 23-ը հունվարի 2019թ.
ժամը $12^{00}$

**Մասնակցում էին՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:
***Քարտուղար՝***
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾՀ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. ***«Լիկվոր», «Արֆարմացիա» ՓԲԸ-ների, «Տոնուս-Լես», «էպզեթ Ֆարմա», «եվրոֆարմ» և «Ջի Թի Սի» ՍՊԸ- ների*** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

1. 1. ***«Լիկվոր», «Արֆարմացիա» ՓԲԸ-ների, «Տոնուս-Լես», «էպզեթ Ֆարմա», «եվրոֆարմ» և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.***

---

1. 1. ***«Լիկվոր», «Արֆարմացիա» ՓԲԸ-ների, «Տոնուս-Լես», «էպզեթ Ֆարմա», «եվրոֆարմ» և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ների*** կողմից Eauction համակարգի միջոցով սահմանված ժամկետում և կարգով ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերը (տեխնիկական բնութագրերը) և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել էլեկտրոնայի աճուրդի հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահարման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավորով պահանջվող փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| գնահատող | Հ. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |